

*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոդերոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՏԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024


Մեպտեմբերի երկրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոոդերոլոգիայի բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերոլոգիաների կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան


ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի երկրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է նորմայի սահմաններում մի փոքր դրական և բացասական շեղումներով:




Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են սեպտեմբերի 11-ին, 12-ին. Տավուշում գրանցվել է +30...+33°C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +27...+29°C, նախալեռնային շրջաններում՝ +33...+35°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +34...+37°C, նախալեռնային շրջաններում՝ +29...+31°C, Շիրակում՝ +26...+30°C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +27...+29°C, նախալեռնային շրջաններում՝ +30...+32°C, Գեղարքունիքում՝ +24...+28°C, Լոռիում՝ +29...+31°C, Արմավիրում, Արարատում՝ +35...+36°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +25...+27°C, նախալեռներում՝ +29...+31°C, Աշտարակում՝ +35°C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են տասնօրյակի երկրորդ կեսին. Տավուշում գրանցվել է +11...+13°C, (Դիլիջան՝ +7°C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +5...+7°C, նախալեռնային շրջաններում՝ +12...+14°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +10...+15°C, նախալեռնային շրջաններում՝ +4...+7°C, Շիրակում՝ +4...+8°C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +3...+8°C, նախալեռնային շրջաններում՝ +11...+13°C, Գեղարքունիքում, Լոռիում՝ +5...+9°C, Արմավիրի, Արարատի մարզերում՝ +12...+14°C (Արմավիրում՝ +9°C), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +4...+6°C, նախալեռներում՝ +8...+12°C:



Տասնօրյակային տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 7-29մմ (71-345%), Լոռիում՝ 12-30մմ (97-173%), Տավուշում՝ 5-26մմ (41-186%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 18-24մմ (141-179%), նախալեռներում՝ 7-10մմ (103-192%), Գեղարքունիքում՝ 15-37մմ (144-298%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 23-30մմ (230-361%), նախալեռնային շրջաններում՝ 22մմ (449%), Արմավիրում՝ 8-10մմ (195-294%), Արարատում՝ 6-11մմ (219-688%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 33մմ (308%), նախալեռնային շրջաններում՝ 17մմ (500%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 2-10մմ (14-156%), նախալեռնային շրջաններում՝ 9-11մմ (37-109%):



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են լեռնային շրջաններում՝ +5..+7°C (Սիսանում՝ +1°C), Արարատյան դաշտում, Արագածոտնի նախալեռներում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ +8...+12°C:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ

Գյուղատնտեսական մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում ընթացքում հանրապետությունում շարունակվել են գյուղատնտեսական աշխատանքները: Եղանակային պայմանները նպաստավոր են եղել բերքահավաքի համար:

Հովտային շրջաններում կատարվել են բանջարանոցային մշակաբույսերի, խաղողի, սերկևիլի, նոսան, ընկույզի, լեռնային շրջաններում՝ հնդավորների, կարտոֆիլի, կաղամբի բերքահավաք:

Լեռնային և նախալեռնային շրջաններում շարունակվել են աշնանացան ցորենի ցանքի և նախացանքի աշխատանքները:

Տասնօրյակի ընթացքում դիտված փոփոխությունները բարձրացրել են հողի խոնավության պաշարները՝ բարելավվելով նախացանքի, ցանքի, հատիկի աճի և զարգացման պայմանները:

